

ՕՏԱՐ ԼԵՁՈՒՆԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՅՈՒՄ

**Գիտական աշխատությունների
ժողովածու**

5

ՀՏԴ 802/809

ԳՄԴ 81.2

0 - 780

Երաշխավորվում է Երևանի պետական
համալսարանի ժոմանագերմանական
բանասիրության ֆակուլտետի խորհրդի կողմից

Խմբագրական խորհուրդ՝

Ե.Լ.Երզնկյան (պատասխանատու խմբագիր)
Կ.Ս.Կարապետյան
Ա.Ս.Բաբայան
Ն.Ս.Թովմասյան

0 - 780

Օտար լեզուները բարձրագույն դպրոցում: Գիտական աշխատու-
թյունների ժողովածու. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2004թ.,
232 էջ:

Ժողովածուն ընդգրկում է լեզվաբանության տարբեր խնդիրներին, ինչպես
նաև օտար լեզվի դասավանդման մեթոդիկային վերաբերող հոդվածներ: Ուսում-
նասիրվում են մասնավորապես իմաստաբանության, քերականության, ոճաբա-
նության և ներկայումս լայն տարածում գտած գործաբանական լեզվաբանության
հարցեր:

Ժողովածուն նախատեսվում է ընդհանուր և ժոմանագերմանական բանասի-
րությանը զբաղվող մասնագետների և օտար լեզու դասավանդողների համար:

0 $\frac{4602020000}{704 (02) 04}$ 2004 թ.

ԳՄԴ 81.2

ISBN 5-8084-0508-4

© Երզնկյան Ե. և ուրիշ., 2004

LISTE DES OUVRAGES LITTÉRAIRES ÉTUDIÉS

1. Courtade P. Les animaux superieurs. Moscou, Editions du Progres, 1966.
2. Courtade P. Les circonstances. Moscou, Editions du Progres, 1966.
3. Duras M. Les petits chevaux de Tarquinia. Editions Gallimard, 1953.
4. Duras M. L'amant. Les éditions de minuit, 1984.
5. Duras M. L'amante anglaise. Editions Gallimard, 1967.
6. Ionesco E. Rhinocéros. Editions Gallimard, 1959.
7. Leroux G. Le mystère de la chambre jaune. Editions Pocket, 2000.
8. Sagan F. Le lit défait. Editions Pocket, 1997.
9. Sagan F. La laisse. Julliard, 1989.
10. Sagan F. Bonjour tristesse. Julliard, 1954.
11. Sagan F. Des bleus à l'âme. Françoise Sagan, 1972.
12. Sagan F. Un chagrin de passage. Plon/Julliard, 1994.
13. Sagan F. Musiques de scènes. Françoise Sagan, 1993.

ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵՐՊԱՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ՄՊՈՐՏԱՅԻՆ ՌԵՊՈՐՏԱԺՈՒՄ

Ռեպորտաժն ինֆորմացիոն ժանր է, որն իրադարձությունները ներկայացնում է օպերատիվ, հանգամանալից կերպով և իր մեջ է ներառում լրատվության ամենատարբեր ձևերը՝ երևույթների մատուցման տարակերպ սկզբունքներով (զրույցներ, նկարագրություն, հաշվետվություն և այլն):

Տեսաբանները միասնական չեն սպորտային ռեպորտաժի ժանրը ձևակերպելու, դրա սահմանները հստակեցնելու առումով: Ունանք ենթադրում են, որ այն կենդանի, պատկերավոր ձևով մատուցվող ինֆորմացիա է /1/, մյուսները համոզված են, որ այն խստորեն մոտենում է թղթակցությանը և կամ նույնիսկ պատկանում է արվեստի ոլորտին /2/:

Հոդվածի նպատակը այս ժանրի սահմանների ճշգրտումը չէ, այլ դրա ներգործման, պատկերավորման միջոցների սպեցիֆիկ առանձնահատկություններից մեկի՝ հեղինակի կերպարի յուրահատկությունների բացահայտումը, քանի որ ռեպորտաժն իր բովանդակությամբ, մատուցման ձևով միտված է հասարակական գիտակցության, հոգեբանության վրա ներգործելու անհրաժեշտությանը:

Ժանրը գտնվում է մշտական փոփոխության, հարստացման ճանապարհին: Տեսաբան Պ. Բարաշևի վկայությամբ ոչ վաղ անցյալում, ռեպորտաժի հաղորդակցական-տեղեկատվական բնույթն անմիջականորեն իր ազդեցությունն էր քողել այս ժանրի ոճական առանձնահատկությունների վրա: «Ռեպորտաժը» միայն ինֆորմացիա հաղորդող էր. այս պարագայում զարմանալի չէր, որ բնական և ազնիվ «ես»-ը, «ինձ թվաց», «ես մտածեցի» արտահայտությունները փոխարինվեցին «մենք»-ով /3/: Այլ կերպ՝ եթե ինչ-որ պահի ինֆորմացիոն ժանրում անտեսվել էր անհատական սկիզբը, ապա աստիճանաբար վերականգնվեց այն՝ հեղինակային ապրումների, խոհերի, հրապարակախոսության տարրերի ներթափանցման ճանապարհով: Ավելին՝ ռեպորտաժն այլևս առանձնանում է բացահայտ հեղինակային «ես»-ով, որն արտահայտվում է նյութի ողջ ոճական երանգավորման՝ և՛ բառապաշարի ընտրության, և՛ ոճական կառույցում:

Ակնհայտ է, որ ռեպորտաժի հեղինակ կարող է լինել այն մարդը, որն ակամատեսն է որևէ իրադարձության, իսկ առանձին դեպքերում՝ նաև մասնակիցը: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս ոչ միայն ընթերցողի մոտ դեպքերին ներկա լինելու պատրանք ստեղծել, այլև ժանրում ներառել այնպիսի

երևույթ, ինչը գրականագիտության մեջ ընդունված է անվանել «հեղինակային շեղում»։ /4/ Այսինքն, հեղինակն անցյալի դեպքերի, իրադարձությունների շնորհիվ իմաստավորում, առավել ամբողջական է դարձնում ներկան՝ լրացուցիչ փաստերի հիշատակումով, ժամանակային տարբեր հեռավորություն ունեցող երևույթների համադրումներով, ասոցիացիաներով ու կապերով։

Եվ որքան բարձր է իրադարձությունների անհատականացման, «սուբյեկտիվիզացիայի» մակարդակը, այնքան ուժեղ է խոսքի ազդեցությունը։

«During the WORLD championship in Mexico Maradona was characterized beyond imagination; phenomenon, wizard, Superstar, phantom and so on. After the semi-final the Argentinian commentator Orlando Dustren discribed his country's team in a very original way entitling 'The General and ten recruits'. There is no doubt that Dustren didn't wish to obscure the others' role. But it must be accepted that he expressed the content of the match not usual, but rather impressive». /5/

Վերոհիշյալ օրինակում լրագրողի ինքնատիպ բնորոշումը դուրս է գալիս սովորական ռեպորտաժին բնորոշ բառապաշարի սահմաններից. ռազմական տերմինների գործադրումը ոչ միայն տեղին է, այլև ընդգծում է պայքարի ողջ ներքին լարվածությունն ու դրամատիզմը։ Այստեղ մրցող կողմերը զիջումների չեն կարող գնալ, ինչպես զիջումների չեն գնա իսկական գեներալներն ու զինվորները մարտադաշտում։

Ասվածից հետևում է, որ ռեպորտաժի ոճական կառույցի մեջ առանձնահատուկ դեր է ստանձնում «հեղինակի կերպարը»։ Ավելին՝ կարող ենք ասել, որ այսօր այն գրեթե դառնում է այս ժանրում ամենակարևորը՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով։

Հեղինակային սուբյեկտիվիզմը, դեպքերը վերապրելու և համադրելու ազատությունը ժանրին հաղորդում է հրապարակախոսությանը բնորոշ հատկանիշներ՝

1. զգացմունքների անմիջականություն.
2. տպավորություններ.
3. տեղի ունեցած իրադրությունների՝ ականատեսի կամ մասնակցի վերապրումներ.
4. գնահատականներ, մեկնաբանություններ, հարցադրումներ.
5. եզրահանգումներ։

Խոսքի հուզականության, դրա անմիջականության բնույթը մեծ չափով կապված է «հեղինակային ես»-ի բացահայտ դրսևորման հետ։ Այստեղ այն գրեթե որևէ պայմանականություն չի ենթադրում։

Խոսքի հեղինակային մասն եղանակավորումը հենց սկզբից պարտադրում է ռեպորտաժի ծավալման որոշակի ձև ու տոնայնություն, քանի որ բայերի գոր-

ծածության մասն ձևը ավելի է մեծացնում մեկնաբանի պատասխանատվությունն իր մախապատրաստած նյութի հանդեպ։

Ռեպորտաժի հեղինակային արտահայտման այս ձևերի կողքին, որոնք ուղղակի բնույթ ունեն, կարևոր տեղ են գրավում և անուղղակի ոճավորման միջոցները։

Այս դեպքում անձնական դերանունների գործածությունը երկրորդ դեմքով՝ համապատասխան բայաձևի հետ միասին դիմում է ընթերցողին՝ այդ ընթացքում բացահայտելով մալ ինքն իրեն։

«Imagine I am already finishing my speech, a part of fans are going back home and you seem to do nothing else». /6/

Սրանց կարելի է ավելացնել և «հեղինակային ես»-ի արտահայտման այն ձևերը, որոնք ամբողջանում են հարցական մախադասությունների, խոսակցական բառերի, «կողմնակի» արտահայտությունների օգտագործման միջոցով։

«Can I agree with him? In such level championships as the world championship it is generally excluded». /6/

Բերված օրինակները վկայում են, որ «հեղինակային ես»-ի դրսևորման տարակերպ ձևերը ոչ միայն պարտադրում են ոճական ինքնատիպ ձևակերպումներ, որոնք բնութագրական են և լրագրողի անմիջական վերաբերմունքի արտահայտություն են, այլ պարզապես դրանք ունեն մալ կառուցվածքային կարևոր նշանակություն։ Հեղինակը պետք է կարողանա ամբողջության մեջ տեսնել խնդիրը, ինչպես մալ՝ ռեպորտաժի մախաբանի, ուղղակի և անուղղակի խոսքի մեջբերման, և՛ հանգույցի, և՛ արագ անցումների՝ շեղումների և, ի վերջո, վերջաբանի միջոցով ստեղծել ամբողջական խոսք։ Ասելիքն ի վերջո ստանում է որոշակի տոնայնություն, քեև կարող են հանդես գալ ռեպորտաժային մեկից ավելի հերոսներ՝ իրենց վերաբերմունքով ու մալ՝ լեզվամտածողությամբ։ Հենց սա էլ հեղինակի խնդիրն է՝ ներկայացնել երևույթը կամ տվյալ հերոսի դիմանկարն իր զարգացման, ձևավորման ընթացքի մեջ։

«Yes, I promise to make you second Babrov», - այսպես է Իլյա Բարոն սկսում իր ռեպորտաժը Ն. Սիմոնյանի մասին։ Պատկերացրեք գավառից եկած երիտասարդի ռեակցիան. չէ՞ որ դա արդեն անուղղակի ակնարկ էր նրան վարպետների քիմ հրավիրելու։ Բարոն ուրիշի անուղղակի խոսքով է սկսում, և դա խոսակցության լավ սկիզբ է, բայց դա ևս նրան քիչ է քվում. մալ անհրաժեշտ է համարում շեղումների շնորհիվ կապակցել տարբեր ժամանակները.

«The action time-autumn, 1945, place, Sukhmy, Stadium. Two local teams were playing when the coach noticed one who never had an athletic structure, but he was light, active and not artificial, could hunt the ball and pass without any difficulty and could see the yard perfectly... without having a professional school. his only exceptional thing was his natural quality». /7/

Մեկնաբանը չի ցանկանում այնպես կառուցել խոսքը, որ սեփական դիրքորոշումն իջեցված լինի ամենացածր աստիճանի: «Հեղինակային ես»-ը իրենով է պայմանավորում թե՛ խոսքի տրամաբանությունը, թե՛ փաստերի համադրումը և, ի վերջո, եզրահանգումը:

Հեղինակը հակադիր ժխտման ճանապարհով հաստատում է սեփական հայացքի ճշմարտացիությունը, որն էլ ռեպորտաժի նպատակն է, որ արտահայտված է հենց վերնագրում («Like himself»): /7/

Հեղինակն ամենատարբեր փաստերի ու ժամանակների համադրումներով ստեղծում է ամբողջական պատկեր, որի կենտրոնում մարդկային բարձր որակներ ունեցող անկրկնելի մարզիկն է:

«Հեղինակային ես»-ի գործադրմամբ ռեպորտաժի սկզբում ձևավորվում է նախերգը: Այնուհետև հեղինակային անմիջական միջամտությամբ առանձին հատվածներում բացահայտվում է «լրագրողի ես»-ը, դա արվում է բացահայտորեն, մի դեպքում խոսքին արժանահավատ տեսք տալու ձևով («I certify myself»)/7/, մեկ այլ դեպքում՝ «հեղինակային ես»-ի ներխուժումը պատումի դաշտն ամբողջական է դարձնում ռեպորտաժի հերոսի խաղի և՛ նախապատմությունը, և՛ նրա՝ որպես մարզիկի, մարդկային որակների բացահայտումը, որը լրացնում և ամբողջացնում է խոսքը: Այլ կերպ՝ ռեպորտաժի ընթացում պատումի նկարագրությունից անցումը քննարկումների, գործողության հիմնական գծից շեղումների և ընդհանրապես խոսքի տոնայնության, բնույթի փոփոխությունները պայմանավորված են «հեղինակային ես»-ի դրսևորման ամենատարբեր ձևերով:

Թեև այսօր հեղինակի կերպարը բավականին մեծ տեղ է գրավում ռեպորտաժում, սակայն դա չի նշանակում, թե դրա սահմանները շատ լայն են, քանի որ այն հակադրվում է ժանրի կարևոր սկզբունքներից մեկին՝ վավերագրական փաստագրական կողմին:

Եթե ընդհանրացնենք, ապա կարող ենք ասել, որ այսօր ռեպորտաժը չի կարող ձևավորվել առանց «հեղինակային ես»-ի, որովհետև լրագրային այս ժանրում կարևոր է ոչ միայն արժանահավատ ինֆորմացիան, այլև՝ դրա պատկերավոր մատուցումը, իրականության զգացմունքային վերապրումը, հեղինակային վերաբերմունքը իրականության նկատմամբ:

Իհարկե, ժանրի մատուցման լավագույն ձևն այս երկու սկզբունքների համագուգակումն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Жанры советской газеты. М., 1959.
2. Хикмет Н. Предисловие к кн.: Мар Н. 50 интервью. М., 1964.
3. Барашев П. Полстроки о репортаже. // Свидетельствует репортер. М., 1985.
4. Ջրբաշյան Էդ. Գրականության տեսություն: Երևան, 1980:
5. Sports games, N 9, 1986.
6. UEFA direct, 5.04.
7. Sports games, N 11, 1986.